



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

N _____

_____ 2012 թ.

Ա/Ձ Աշոտ Դավոյանին
հասցե՝ ք.Երևան, Տերյան 1
պատճենը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ Գյումրու ՏՀՏ պետ
պարոն Հ.Կարապետյանին

Կից ուղարկվում է Ձեր գանգատի վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 17.01.2012թ. թիվ 2/4 որոշումը:

Առդիր՝ 3 թերթ:

Հարկային մարմնի գանգատարկման
հանձնաժողովի նախագահ՝

Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 2/4

17 հունվարի 2012թ.

Քննարկվեց Ա/Ձ Աշոտ Դավոյանի գանգատը «ԿԱ ՊԵԿ ներքին դիտարկումների և վերահսկողության վարչության 09.12.2011թ. թիվ 1101242 ստուգման ակտի դեմ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն «ԿԱ ՊԵԿ նախագահի ժ/պ 23.11.2011թ. թիվ 1101242 հանձնարարագրի «ԿԱ ՊԵԿ ներքին դիտարկումների և վերահսկողության վարչության սահմաններում Ա/Ձ Աշոտ Դավոյանի մոտ կատարվել է աշխատողի աշխատանքի ընդունումը «ԿԱ ՊԵԿ ներքին դիտարկումների և վերահսկողության վարչության (առանց գրավոր պայմանագրի (հրամանի) կնքման աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված), ինչպես նաև հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում, որն ընդգրկել է 17.09.2011թ-ից մինչև ստուգման ավարտն ընկած ժամանակաշրջանը: Արդյունքում 01.12.2011թ-ին կազմվել է թիվ 1101242 ստուգման ակտի նախագիծը, իսկ 09.12.2011թ-ին՝ թիվ 1101242 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ): Ստուգման ակտի 2-րդ կետով մասնավորապես արձանագրվել է, որ գլխավոր հարկային տեսուչ Սարգիս Ավետիսյանի կողմից 30.11.2011թ. ժամը 15:45-ին ք.Երևան, Տերյան փ. 1 շ. 39 հասցեում գտնվող խանութ և հանրային սննդի կազմակերպման վայրից կատարվեց գնում (գնվեց 3 հատ քյաբաբ և 2 հատ կոլա 0.5 լիտր տարողությամբ) 2500 դրամի չափով, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով: Ա/Ձ Աշոտ Դավոյանի կողմից գումարը չմուծագրեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրվեց: Ստուգման անցկացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այսուհետ ժամը 15:50-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց ՀՀ հաշվետվություն՝ 13190 դրամ ընդհանուր գումարով, որի մեջ ներառված չէր կատարված վճարման արժեքը՝ 2500 դրամ: Ստուգմամբ արձանագրվեց, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել են «Կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի պահանջները: Արդյունքում տնտեսվարող սուբյեկտին առաջադրվում է պատասխանատվություն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով՝ գումարով 300 000 դրամ:

Ա/Ձ Աշոտ Դավոյանի գանգատում մասնավորապես նշված է.

Ակտում նշվածն ընդհանրապես չի համապատասխանում իրականությանը, իմ խանութից որևէ ստուգիչ գնում չի կատարվել, բոլոր կատարված գնումների դիմաց ՀԴՄ կտրոն տրամադրվել է, ակտով «պարզված հանգամանքները» մտացածին են, ուստի և ստուգման ակտը ոչ իրավաչափ վարչական ակտ է, չի կարող հանգեցնել իրավաբանական հետևանքների և ենթակա է անվավեր ճանաչման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Դուրս բերված հաշվետվության 13190 դրամ գումարը չի համեմատվել դրամարկղում փաստացի առկա գումարի հետ, այդ պարագայում, առանց համեմատության, տեսուչներն ինչպես են պարզեր, որ ՀԴՄ-ում ներառված չէր «կատարված վճարման արժեքը»:

Բացի այդ, գնված ապրանքը վերադարձնելու կամ ներկայացնելու արձանագրություն չի կազմվել, այսինքն բացակայում է իրավախախտման առարկան: Այդ դեպքում ինչպես է ապացուցվում այն փաստը, թե հսկիչ գնում իրականում կատարվել է, ընդ որում ՀՀ հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 2500 դրամը, չի մուծագրվել ՀԴՄ, դուրս չի բերվել կտրոն և ՀՀ հաշվետվություն:

Այսպիսով, վերը նշված փաստական հանգամանքներից բխում է, որ ինձ պատկանող խանութում հսկիչ գնում չի կատարվել և ստուգման ակտն ընդունվել է օրենքի խախտմամբ: Հետևապես կիրառելի է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի դրույթը:

Բացի այդ, եթե նույնիսկ պայմանականորեն ընդունենք, թե կատարվել է հսկիչ գնում, ապա այն կատարվել է օրենքի հետևյալ բազմաթիվ խախտումներով և ապացուցում է այդ գնումը կատարված չլինելու հանգամանքը՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Հանձնարարագրում նշված չէ հսկիչ գնում կատարելու որևէ հիմք, այսինքն՝ ստուգումն ինքնանպատակ է եղել, բացի այդ հանձնարարագիրը կնքված չի եղել հսկիչ գնում իրականացնող հարկային մարմնի կնիքով:

Մինչդեռ, <Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հրամանի կամ հանձնարարագրի երկու օրինակը, ստուգումն սկսելուց առնվազն երեք աշխատանքային օր առաջ, տրվում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին, բացառությամբ ... հարկային մարմինների կողմից ակցիզային դրոշմանիշների և հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման, ... ուղղված դեպքերում իրականացվող ստուգումների, ... : Ըստ նույն նշված օրենքի 2-րդ հավելվածի 1.4-րդ կետի՝ <Հսկիչ գնումն իրականացվում է հարկային մարմնի ղեկավարի կամ հարկային տեսչության պետի կողմից տրված գրավոր հանձնարարագրի հիման վրա, որտեղ նշվում են հսկիչ գնում կատարելու հիմքերը, նպատակը, տնտեսավարող սուբյեկտի տվյալները (անվանումը, գտնվելու վայրը), հսկիչ գնում իրականացնելու վայրը, ժամկետները և հսկիչ գնում իրականացնող հարկային մարմնի պաշտոնատար անձի (անձանց) տվյալները (անունը, ազգանունը, պաշտոնը)՝ վավերացված հսկիչ գնում իրականացնող հարկային մարմնի կնիքով:

Վերոհիշյալի վերաբերյալ իր դիրքորոշումն է արտահայտել նաև ՀՀ վճարեկ դատարանն իր 2009 թվականի նոյեմբերի 06-ին թիվ ՎԴ/5848/05/08 վարչական գործով:

Ինձ պատկանող հսկիչ-դրամարկղային մեքենայից <Z> հաշվետվության ցուցմունք վերցնելու վերաբերյալ ստուգման ընթացքում չի կազմվել համապատասխան արձանագրություն՝ ստուգման նպատակներին անմիջականորեն առնչվող փաստաթղթեր և այլ անհրաժեշտ նյութեր ժամանակավորապես վերցնելու և դրանք վերադարձնելու ժամկետի մասին, և այդ արձանագրության մեկ օրինակը չի հանձնվել ինձ:

Մինչդեռ, <Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին> ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի <զ> կետի համաձայն՝ ստուգումն իրականացնող անձինք իրենց լիազորություններն իրականացնելիս իրավունք ունեն՝ վերցնել փաստաթղթեր, կրկնօրինակներ, լուսապատճեններ, իրեր, փորձանմուշներ և այլ անհրաժեշտ նյութեր, որոնք անմիջականորեն առնչվում են ստուգման նպատակներին և չեն խոչընդոտում տնտեսավարող սուբյեկտի բնականոն աշխատանքին: Փաստաթղթերը վերցնելիս ստուգում իրականացնող պաշտոնատար անձինք կնիքով կնքում են դրանց կրկնօրինակները և հանձնում տնտեսավարող սուբյեկտի ներկայացուցիչներին: Ըստ նույն Օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ստուգման նպատակներին անմիջականորեն առնչվող փաստաթղթեր, իրեր, փորձանմուշներ և այլ անհրաժեշտ նյութեր ժամանակավորապես վերցնելու դեպքում այդ մասին կազմվում է արձանագրություն, որում նշվում է դրանց վերադարձման ժամկետը: Արձանագրության 1 օրինակը հանձնվում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող անձին:

Խախտվել են <Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ, 3-րդ հոդվածի 1-ին մասերի և <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, որի վերաբերյալ առկա է նաև ՀՀ վճարեկ դատարանի 2010 թվականի մարտի 12-ի թիվ ՎԴ/2521/05/08 վարչական գործով կայացրած որոշումը:

Ելնելով վերոգրյալից Ա/Ձ Աշոտ Դավոյանը խնդրում է անվավեր ճանաչել ստուգման ակտը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), լսելով ստուգումն իրականացրած պաշտոնատար անձի ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ ստուգումն իրականացվել է ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի համաձայն, անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Տվյալ դեպքում Ա/Ձ Աշոտ Դավոյանի նկատմամբ ընդունվել է ոչ բարենպաստ վարչական ակտ, հետևապես դրանում տեղ գտած տեղեկությունների ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը, ի դեմս ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց:

Իր հերթին <Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, ստուգման ակտում պետք է

նկարագրվեն արձանագրված խախտումները, իսկ <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի համաձայն, վարչական ակտն իր բովանդակությամբ պետք է համապատասխանի դրա ընդունման համար օրենքով սահմանված պահանջներին, նշում պարունակի այն բոլոր էական փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք վարչական մարմնին հիմք են տվել ընդունելու համապատասխան որոշում:

Ելնելով վերոգրյալից ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից մշակվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգման ընթացքում իրականացվող գործողությունների ընթացակարգ: Մասնավորապես, ՀՀ ԿԱ ՊԵԿ վերադաս հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին, հարկային (տարածքային) տեսչությունների պետերին հասցեագրված ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 02.06.2011թ-ի թիվ 01/4-4/134013-11 շրջաբերական նամակի (այսուհետ՝ շրջաբերական նամակ) <<ԴՄ ստուգման ակտի բովանդակության տիպային ձև> բաժնում հստակ նշված են <ԴՄ ստուգման ընթացքում կատարվող գործողությունները և ստուգման արդյունքում կազմվող ակտի բովանդակության տիպային ձևը:

Շրջաբերական նամակի <<ԴՄ ստուգման ակտի բովանդակության տիպային ձև> բաժնում նշված է, որ վաճառողի կողմից համապատասխան վճարման արժեքը <ԴՄ չմուտքագրվելու և <ԴՄ կտրոն չտրամադրելու դեպքում ստուգումն անցկացնող հարկային ծառայողների կողմից <ԴՄ-ից դուրս է բերվում <Z> հաշվետվությունը, կատարված վճարման արժեքը մուտքագրվում է <ԴՄ, դուրս է բերվում կտրոն և կրկին անգամ դուրս է բերվում <Z> հաշվետվությունը:

Հիշատակված գործողություններն իրականացվելուց հետո գնված ապրանքները ստուգումն անցկացնող հարկային ծառայողները պետք է ետ վերադարձնեն տնտեսվարող սուբյեկտին, կազմեն համապատասխան արձանագրություն, ինչպես նաև ետ ստանան գնման գումարը և տպեն վերադարձի կտրոնը կատարված վճարման արժեքի չափով:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Աշոտ Դավոյանի մոտ իրականացված ստուգման ընթացքում շրջաբերական նամակով նախատեսված ընթացակարգը չի պահպանվել:

Ստուգումն իրականացրած պաշտոնատար անձին ուղղված հարցին, թե շրջաբերական նամակով նախատեսված գործողությունները ինչ պատճառով չեն կատարվել, հնչեց պատասխան, որ պատճառը հանդիսացել է Ա/Ձ Աշոտ Դավոյանի արգելքը:

Ստուգումն իրականացրած պաշտոնատար անձին ուղղված հաջորդ հարցին, թե կազմվել է արդյոք արձանագրություն Ա/Ձ Աշոտ Դավոյանի կողմից ստուգող անձանց գործողությունները խոչընդոտելու վերաբերյալ, հնչեց պատասխան, որ նման արձանագրություն չի կազմվել:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ա/Ձ Աշոտ Դավոյանը ժխտում է գնում կատարված լինելու հանգամանքը, Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում Ա/Ձ Աշոտ Դավոյանի մոտ իրականացված ստուգմամբ, ըստ էության, չի հիմնավորվել վերջինիս կողմից ՀՀ Կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կանոնների 19-րդ կետի պահանջները խախտվելու փաստը, քանի որ միայն <ԴՄ-ից <Z> հաշվետվությունը դուրս բերելով չի կարելի պնդել և հիմնավորված համարել գնում կատարված լինելու և դրա դիմաց <ԴՄ կտրոն չտրամադրելու հանգամանքը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <<արկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ ներքին դիտարկումների և վերահսկողության վարչության 09.12.2011թ. թիվ 1101242 ստուգման ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ